Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 24.13/[150017]-13

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22-ԻՆ ԺԱՄԸ 14:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Ս. Թադևոսյան	ՀՀ քաղաքաշինության նախարար
Ա. Ասատրյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
Ա. Աշոտյան	ՀՀ կրթության և գիտության նախարար
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Պ. Սաֆարյան	ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ
Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ
Կ. Արեյան	Երևանի քաղաքապետի տեղակալ
Կ. Մարգարյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության պետ
Ս. Տոնոյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար
Լ. Կարաքաշյան	«Վարդանանց ասպետներ» կազմակերպության ներկայացուցիչ
Ա. Վարդանյան	Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության տնօրեն
Ա. Կիրակոսյան	Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի գործադիր տնօրեն
Ա. Պողոսյան	Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի մոնիթորինգի և գնահատման բաժնի վարիչ

1. Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի 3-րդ ծրագրի 2013 թվականի բյուջեի հաստատում

(Ա. Կիրակոսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի 3-րդ ծրագրի 2013 թվականի բյուջեն:

2. Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի 2013 թվականի ընթացքում իրականացման ենթակա ծրագրերի մասին

(Ա. Կիրակոսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Կիրակոսյանի զեկուցումը՝ 2013 թվականի ընթացքում իրականացման ենթակա ծրագրերի մասին:

3. Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի գործունեության հեռանկարների քննարկում

(Ա. Կիրակոսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Կիրակոսյանի զեկուցումը:

4. Ընթացիկ հարցեր

(Ա. Կիրակոսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հավանություն տալ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Կիրակոսյանի առաջարկին և «25 Intel

ֆիրմայի Duo Core» համակարգիչները տրամադրել առավել կարիքավոր համայնքների դպրոցներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ